



Ի. ԱՏՎԼԻՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱ-  
ՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԻԶԱԶԳԱ-  
ՅԻՆ ԲՆՈՒՑԹՅՈՒՆ



ՊԵՏԵՐԱՏ – ԳԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ՅՈՒՆԻ  
ՅԵՐԵՎԱՆ • 1989



ԳՐԱԴԱՏԱՐԱՆԸ ԲՈԼՈՐ ՀԵՐԿՐՄՆԵՐԻ, ՄԻԱՅՆ

9(47)21

## Ի. ԱՏՎԼԻՆ

ԱՏՈՒԳՎԱՐԻ Հ 1961 թ.

# ՀՈԿՏԵՐՔԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ

Հոկտեմբերի տասնամյակի առքիվ

~~1973~~



ԳԵՍԴՐԱՏ  
ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՑԵՐՎԱՆ • 1938

A II  
6981

И. СТАЛИН  
МЕЖДУНАРОДНЫЙ ХАРАКТЕР  
ОКТЯБРЬСКОЙ РЕВОЛЮЦИИ

Армгиз—Издательство  
полит. литературы  
Ереван, 1938

Հոկտեմբերյան հեղափոխությունն «ազգային շրջանակ-ներով» հեղափոխություն չե միայն։ Նա, սմբենից առաջ՝ ինտերնացիոնալ, համաշխարհային կարգի հեղափոխություն ե, վորովհետև նա մարդկության համաշխարհային պատմության մեջ արժատական շրջադարձ ե նշանակում էին, կապիտալիստական աշխարհից դեպի նոր, սոցիալիստական աշխարհ։

Հեղափոխություններն անցյալում սովորաբար նրանով եյին վերջանում, վոր շահագործողների մի խումբ կառավարման դեկի մոտ փոխարինվում եր շահագործողների մի այլ խմբով։ Շահագործողները փոխվում եյին, շահագործումը՝ մնում։ Այսպես ե յեղել բանը ստրուկների ազատազրական շարժումների ժամանակ։ Այսպես ե յեղել բանը ճորտերի ապստամբությունների շրջանում։ Այսպես ե յեղել բանը հայտնի «մեծ» հեղափոխությունների շրջանում Անդրեյացում, Թրանսխայում, Գերմանիայում։ Յես չեմ խոսում Փարիզի Կոմունայի մասին, վորը յեղել ե պրոլետարիատի առաջին, փառապանծ, հերօսական, բայց ե այնպես անհաջող փորձը՝ պատմությունը կապիտալիզմի դեմ դարձնելու։

Հոկտեմբերյան հեղափոխությունն այդ հեղափոխություններից սկզբունքորեն ե տարբերվում։ Նա իրեն նպատակ ե դնում վո՛չ թե շահագործման մի ձեւը շահագործման մի այլ ձեռով, շահագործողների մի խումբը շահագործողների մի այլ խմբով փոխարինելը, այլ մարդու կողմից մարդու ամեն մի շահագործում վոչնչացնելը, բոլոր ե ամեն տեսակի շահագործող խմբերը վոչնչացնելը, պրոլետարիատի դիկտուրա հաստատելը, մինչեւ այժմ ոչոյն-

թյուն ունեցած ճնշված բոլոր դասակարգերից ամենահետափոխական դասակարգի իշխանությունը հաստատելը, սոցիալիստական անդասակարգ նոր հասարակություն կազմակերպելը:

Հենց այս պատճառով եւ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթուքյունն արմատական բեկում և նշանակում մարդկաւթյան պատմության մեջ, արմատական բեկում՝ համաշխարհային կապիտալիզմի պատմական ճակատադրում, արմատական բեկում՝ համաշխարհային չափման մեջ, արմատական բեկում՝ ամբողջ աշխարհի շահագործվող մասսաների պայքարի յեղանակների ու կազմակերպման ձեւերի մեջ, կենցաղում ու արագիցիաներում, կուլտուրայի ու գործարակության մեջ:

Սրանումն ե այն բանի հիմքը, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունն ինտերնացիոնալ, համաշխարհային կարգի հեղափոխություն ե:

Սրանումն ե նույնպես այն խորը համակրանքի արմատը, վոր տածում են դեպի Հոկտեմբերյան հեղափոխությունը բոլոր յերկրների ճնշված դասակարգերը՝ նրա մեջ տեսնելով իրենց ազատազրման դրավականը:

Կարելի կլիներ նշել մի շարք հիմնական հարցեր, վորոնց գծով ընթանում ե Հոկտեմբերյան հեղափոխության ներգործությունը հեղափոխական շարժման դարդացման վրա ամբողջ աշխարհում:

1. Հոկտեմբերյան հեղափոխությունը, ամենից առաջ, նրանով ե նշանավոր, վոր նա ճեղքեց համաշխարհային իմպերիալիզմի ճակատը, տապակեց իմպերիալիստական բուրժուազիային կապիտալիստական ամենամեծ յերկըրներից մեկում և իշխանության գլուխ կանգնեցրեց սոցիալիստական պրոլետարիատին:

Վարձվողների դասակարգը, հալածվածների դաստիարգը, ճնշվածների ու շահագործվողների դասակարգը մարդկության պատմության մեջ առաջին անգամ բարձրացավ մինչև իշխող դասակարգի գրություն՝ իր որինակով վարակելով բոլոր յերկրների պրոլետարներին:

Եթև նշանակում ե, վոր Հոկտեմբերյան հեղափոխու-

թյունը բաց արեց իմպերիալիզմի յերկրներում նոր վարչական, պրոլետարական հեղափոխությունների պարագը-ջանը:

Հոկտեմբերյան հեղափոխությունը կարլածառերի ու կապիտալիստների ձեռքից վեցըքեց արտադրության դործիքներն ու միջոցները և դարձրեց հստարակական սեփականություն՝ հակագրելով, այսպիսով, բուրժուական սեփականությունը սոցիալիստական սեփականությունը: Հենց սրանով ել նա մերկացըքեց կապիտալիստների սուան այն մասին, թե բուրժուական սեփականությունն անձնումիւի, սրբազն, հավիտենական է:

Նա խից բուրժուապիտայից իշխանությունը, զրկեց բուրժուապիտին քաղաքական իրավունքներից, կործանեց բուրժուական սեփական ապարատը և Հանձնեց իշխանությունը խորհուրդներին, այսպիսով, բուրժուական սպառամենուարիզմին՝ վորովես կապիտալիստական դեմոկրատիայի՝ հակագրելով խորհուրդների սոցիալիստական իշխանությունը՝ վորովես պրոլետարական դեմոկրատիա: Լաֆարգն իրավացի յեր, յերբ նա զեսկս 1887 թ. առում էր, թե հեղափոխության հենց հետեւյալ սրբ «նախկին բուրժուապիտաները կզրկվեն ընտրական իրավունքներից»: Հոկտեմբերյան հեղափոխությունը հենց սրանով մերկացըքեց սոցիալ-դեմոկրատների սուան այն մասին, թե այժմ հասրավուր և խաղաղ անցումը սոցիալիզմին բուրժուական սպառամենուարիզմի միջոցով:

Բայց Հոկտեմբերյան հեղափոխությունը կանգ չառավ և չեր ել կարող կանգ տանել սրա վրա: Բանդերով հինը, բուրժուականը, նա ձեռնամատիս յեղակ կառուցելու նորը, սոցիալիստականը: Հոկտեմբերյան հեղափոխության տասը տարին, կուսակցության, արհմիությանների, խորհուրդների, կոոպերացիայի, կուլտուրական կաղմակերպությունների, տրանսպորտի, արդյունաբերության, կարմիր բանկի կառուցման տասը տարին է: ԽՍՀՄ-ի մեջ չինարարության ճակատում սոցիալիզմի ունիցած անկատկածելի Հաջողություններն ակնբախորեն ցույց տվին, վոր պրոլետարիատը կարող է հաջողությամբ յերկիր կառավարել՝ առանց բուրժուապիտի և ընդդեմ բուրժուապիտի, վոր

նա կարող է հաջողությամբ կառուցել արդյունարերության՝ առանց բուրժուազիայի և ընդդեմ բուրժուազիայի, վոր նա կարող է հաջողությամբ դեկավական անստեսությունը՝ առանց բուրժուազիայի և ընդդեմ բուրժուազիայի, վոր նա կարող է հաջողությամբ սոցիալգոմ կառուցել՝ չնայած կապիտալիստական շրջապատճանը: Հին «թեորիան» այն մասին, թե ինչպես վոր զգութան ու մարմնի այլ մասերը չեն կարող կառավարվել առանց ստամոքսի, այնպես և չահազործվողները չեն կարող կառավարվել առանց չահազործվողների, միմիայն հնագարի պատճության հոռմեական հայտնի սենատոր Մենենիսս Ագրիպայի սեփականությունը չե: Այդ «թեորիան» ներկայումս հանդիսանում է սոցիալ-դեմոկրատիայի քաղաքական «Փիլիպսովիայության» անկյունաքարթը՝ ընդհանուրապես, խմբերիալիստական բուրժուազիայի հետ կոռալիցիա կազմելու՝ սոցիալ-դեմոկրատական քաղաքականության անկյունաքարթը՝ ստանձնապես: Այդ «թեորիան», վոր ստացել և նախապաշտմունքի բնույթի, կապիտալիստական յերկրների պրոլետարիոտին հեղափոխականացնելու հանապարհին ընկած ամենալուրջ արգելքներից մեկն և ներկայումս: Զօկտոեմբերյան հեղափոխության կարեարագույն հետևանքներից մեկն այն փաստն է, վոր նա այդ սուսա «թեորիային» մահացու հարված հանցրեց:

Եւ արգյուք պետք կա՞ ապացուցելու, վոր Հոկտեմբերյան հեղափոխության այլ և զրանց նման հետեւանքները չեյին կարող և չեն կարող մնալ առանց լուրջ ազգեցության կապիտալիստական յերկրների բանվոր դասակարգի հեղափոխական շարժման վրա:

Այնպիսի հանրածանոթ փաստեր, ինչպիսիներն են՝ կոմունիզմի առաջընթաց շարժման ծավալումը կապիտալիստական յերկրներում, ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգի նկատմամբ բոլոր յերկրների պրոլետարների ունեցած համակրանքի աճումը, վերջապես, բանվորական պատվիրակությունների հասանքը գեղի Խորհրդարների յերկիրը՝ անուարակունելիորեն խսում են այն մասին, վոր Հոկտեմբերյան հեղափոխության դցած սերմերն արդեն սկսում են պոտուզներ տալ:

2. Հոկտեմբերյան հեղափոխությունը սասանեցրեց իմ-  
պերիալիզմը վոչ միայն նրա տիրապետության կենտրոն-  
ներում, վոչ միայն «մետրոպոլիաներում»։ Նա հարվածեց  
իմպերիալիզմի թիկունքներին ել, նրա պերիֆերիային ել՝  
խարբալելով իմպերիալիզմի տիրապետությունը գաղութա-  
յին ու կախյալ յերկրներում։

Հոկտեմբերյան հեղափոխությունը, տապալելով կալ-  
վածառերին ու կապիտալիստներին, փշրեց ազգային-  
գաղութային ճնշման շղթաները և այդ ճնշումից ազատա-  
գրեց լայնատարած պետության առանց բացառության բո-  
լոր ճնշված ժողովուրդներին։ Պրոլետարիատը չի կարող  
ազատագրել իրեն՝ չաղատագրելով ճնշված ժողովուրդնե-  
րին։ Հոկտեմբերյան հեղափոխության բնորոշ դիմն այն  
փասոն է, վոր նա ԽՍՀՄ-ի մեջ այդ ազգային-գաղութա-  
յին հեղափոխությունները կենսագործեց վո՛չ թե ազգային  
թշնամության ու ազգամիջյան ընդհարումների դրոշի ներ-  
քո, այլ ԽՍՀՄ-ի ազգությունների բանվորների ու դրույզա-  
ցիների փոխազարձ վստահության ու յեղբայրական մերձեց-  
ման դրոշի ներքո, վո՛չ թե հանուն նացիոնալիզմի, այլ  
հանուն ինտերնացիոնալիզմի։

Հենց այն պատճառով, վոր ազգային-գաղութային  
հեղափոխությունները մեղանում կատարվեցին պրոլե-  
տարիատի ղեկավարությամբ ու ինտերնացիոնալիզմի գրոշի  
ներքո, հենց այդ պատճառով ել պարիա-ժողովուրդները,  
սորուկ-ժողովուրդները, մարդկության պատմության մեջ  
առաջին անգամ բարձրացան իրոք վոր ազատ և իրոք վոր  
հավասար ժողովուրդների դրության՝ վարակելով իրենց  
որինակով համայն աշխարհի ճնշված ժողովուրդներին։

Այս նշանակում է, վոր Հոկտեմբերյան հեղափոխու-  
թյունը նոր դարաշրջան և բաց արել, դարաշրջան զաղու-  
րային հեղափոխությունների, վորոնք կենսագործում են  
ուժաբարձր ննշված յերկրներում պրոլետարիատի հետ դաշ-  
նակցած, պրոլետարիատի ղեկավարությամբ։

Առաջներում «ընդունված եր» կարծել, թե աշխարհն  
սկզբից ի վեր բաժանված և յեկել ստորին ու վերին ռասա-  
ների, սկերի ու սպիտակների, վորոնցից առաջիններն ան-  
ընդունակ են քաղաքակրթության և դատապարտված են

շահագործման առարկա լինելու, իսկ յերկրորդները հանդիսանում են քաղաքակրթության միակ կրտսելը, վորոնչ կոչված են առաջիններին շահագործելու: Այժմ այդ առապելը պետք է համարել ջախջախված ու դեն չպրափած: Հոկտեմբերյան հեղափոխության կարևորագույն հետեանքներից մեկն այն փաստն է, վոր նա այդ առասպելին մահացու հարված հասցրեց՝ դործով ցույց տալով, վոր խորհրդային զարգացման հունը ներքաշված ազատագրված վոչյեվրոպական ժողովուրդներն ամեններն եւ ավելի պակաս ընդունած չեն առաջ շարժելու իրոք առաջալոր կուրուրան և իրաք առաջալոր քաղաքակրթությունը, քան յերապական ժողովուրդները:

Առաջներում «ընդունած եր» կարծել, թե ճնշված ժողովուրդների ազատագրման միակ մեթոդը քուրժուական նացիոնալիզմի մեթոդն է, ազգերը միմյանցից անջատվելու մեթոդը, նրանց միմյանցից բաժանելու մեթոդը, տարբեր ազգերի աշխատավորական մասսաների միջև ազգային թշնամությունն ուժեղացնելու մեթոդը: Այժմ այդ առապելը պետք է համարել տապարված: Հոկտեմբերյան հեղափոխության կարևորագույն հետեանքներից մեկն այն փաստըն է, վոր նա այդ առասպելին մահացու հարված հասցրեց՝ դործով ցույց տալով ճնշված ազգերի ազատագրման պրոլետարական, ինտերնացիոնալական մեթոդի՝ վարպետ միակ ճիշտ մեթոդի՝ հնարավորությունն ու նպատակահարմարությունը, դործով ցույց տալով ամենատարրեր ժողովուրդների բանվորների ու գյուղացիների յեղբայրական դաշինքի հնարավորությունն ու նպատակահարմարությունը՝ հոժարակամուրյան ու ինտերնացիոնալիզմի հիմունքներով: Այս բանի ուղղակի ապացույց չի կարող չծառայել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության գոյությունը, Միության, վորը հանդիսանում է բոլոր յերկրների աշխատավորների առագա միավորման նախատիպարը համաշխարհային միասնական անտեսության մեջ:

Ինչ խոսք, վոր Հոկտեմբերյան հեղափոխության այս և սրանց նման հետեանքները չեյին կարող և չեն կարող մնալ առանց լուրջ ազդեցություն ունենալու զաղութային

ու կախյալ յերկրների հեղափոխական շարժման վրա։ Այս  
ժաման ևն անկասկածելիութեն խոսում այնպիսի փաստեր,  
ինչպիսիներն են՝ ճնշված ժողովուրդների հեղափոխական  
շարժման աճումը Զինաստանում, Խնդոնեղիայում, Հընդ-  
կաստանում և այն և այս յերկրների ժողովուրդների հա-  
մակրածիքի աճումը գեղի ԽՍՀՄ։

Դազութների ու կախյալ յերկրների անխռով շահա-  
զորման ու ճնշման գարագիջան անցալ։

Հասել ե աղասագբատկան հեղափոխությունների գա-  
րագրութիւր զագութներում ու կախյալ յերկրներում, այս  
յերկրների պրոլետարիատի զարթոնքի զարագլուխը, հե-  
ղափոխության մեջ նրա հեգեմոնիայի զարագլութը։

3. Գցելով հեղափոխության սերմերն ինչպես խօսե-  
րիսլիզմի կենարունները, այնպես նաև նրա թիկունչները,  
թուրացնելով խօսերիսլիզմի զղորությունը «մերժութելի-  
աներում» և սասանեցնելով նրա տիրապետությունը գա-  
ղութներում, — Հոկտեմբերյան հեղափոխությունը հենց  
սրանով հարցականի տակի ե զրել ամբողջուրյամբ վերցրած  
համաշխարհային կապիտալիզմի բուն իսկ զոյտությունը։

Յեթէ կապիտալիզմի տարերային զարգացումն խօսե-  
րիսլիզմի պայմաններում, — այդ զարգացման անհամաստրա-  
չափության պատճառով, կոնֆլիկտների ու պատերազմա-  
կան ընդհարութների անխռուսափելության պատճառով,  
մեջնապես, իմայիրիսալիսատկան չտեսնուած սպանութիւնը  
ազատության պրացեսի, առաջ Հոկտեմբերյան հեղափոխություն-  
ու նրա հետ կազմած՝ Հոկտեմբերի սննդամեջը չեյին կարող չա-  
րագացնել այդ պրացեսը, քայլ առ քայլ վողովելով՝ սրբե-  
լով համաշխարհային խօսերիսլիզմի բուն հիմունքները։

Դեռ ավելին։ Հոկտեմբերյան հեղափոխությունը, սա-  
սանեցնելով իմայիրիսալիզմը՝ զրա հետ միասին հանձին  
պրոլետարական առաջին դիկտատուրայի ստեղծեց համաշ-  
խարհային հեղափոխական շարժման մի հզոր ու բացորչ  
բազա, վորք նա առաջներում յերեք չի ունեցել և վորի վրա  
նա այժմ կարող ե հենվել։ Հոկտեմբերյան հեղափոխու-  
թյունն ստեղծեց համաշխարհային հեղափոխական շարժ-

ման այն հզոր ու բացորոշ կենտրոնը, վոր առաջներում յերթք չի ունեցել այդ շարժումը և վորի շուրջը նա այժմ կարող է համախմբվել՝ կազմակերպելով բարր յերկրների պրակտորների ու ննշված ժողովուրդների հեղափոխական միավանական նակատ ընդդեմ իրավերիալիզմի:

Յյու ամենից սուած - նշանակում է, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը համաշխարհային կապիտալիզմին մահացու վերք է հասցրել, վորից նա ե'լ յերբեք վոտքի չի կանգնի: Հենց այս պատճառով ել կապիտալիզմի ույլես յերբեք չի վերադարձնի իրեն այն «հավասարակշուությունը» և այն «կայունությունը», վոր նա ուներ մինչև Հոկտեմբերը: Կապիտալիզմը կարող է մասնակի կայունանալ, նա կարող է սացիոնալացնել իր արտադրությունը, յերկրի կառավարությունը հանձնել Փաշչովմին, ժամանակավորապես ճնշել բանվոր գասակարգին, բայց նա յերբեք չի վերադարձնի իրեն այն «անդրբությունն» ու այն «վստահությունը», այն «հավասարակշուությունն» ու այն «կայունությունը», վորոնցով նա պղնամությում եր սուած, վորովհետեւ համաշխարհային կապիտալիզմի ճգնաժամը զարգացման մի այնպիսի աստիճանի յեն հասել, յերբ հեղափոխության կրակներն անփուստիկություններում, մերթ պերիֆերիայում՝ ի չեք զարձնելով կապիտալատական կարկառանները և որեցոր մասեցներով կապիտալիզմի անկումը: Իսկ և իսկ ինչպես վոր հայանի սուակի մեջ ե. «առաջ դուրս պրծացրեց՝ քիթը խրվեց, քիթը դուրս պրծացրեց՝ պոչը խրվեց»:

Յերկրորդ, այս նշանակում է, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը վորոց բարձրության հասցեց ամբողջ աշխարհի ննշված դասակարգերի ուժն ու տեսակարար կշեռը, աքիությունն ու մարտական պատրաստականությունը՝ հարկադրելով տիրապետող դաստկարգերին, վոր հաշվի նուանց հետ, իրեւ, նոր, լուրջ դործոնի հետ: Այժմ աշխարհի աշխատավորական դանդվածներն այլևս չի կարելի դիմակէ վորապես մի «կույր ամբոխ», վորը խարիսխում և մթության մեջ և զորկ է հեռանկարներից, վորովհետեւ Հոկտեմբերյան հեղափոխությունը նրանց համար ստեղծեց մի փարոս, վորը լուսավորում և նրանց նանապարհը և հե-

ուանկարներ և տալիս։ Յեթե առաջներում չկար մի համաշխարհյային բաց Փորում, վարտեղից կարելի լիներ ցուցադրել և ձեւավորել ճնշված դասակարգերի ակնկաւլություններն ու ձգտումները, ապա այժմ այդպիսի Փորում կա հանձին առաջին պլոտեարական գեկտատուրայի։ Հաղիպ թե կարելի յէ կասկածել, վոր այդ Փորումի վոչնչացումն «առաջապար յերկրների» հասարակական-քաղաքական կյանքը յերկար ժամանակով կծածկեր անզուսպ ու ռեակցիայի խավարով։ Զի կարելի ժխտել այն, վոր «բոլեկիլան պետության» գոյության սոսկական վաստն անդամ սանձահարում և ռեակցիայի սկ ուժերը՝ հեշտացնելով ճնշված դասակարգերի պայքարն իրենց ազատագրման համար։ Հատկապես սրանով ել բացարձում և այն անսանական ատելությունը, վոր բոլոր յերկրների շահագործողները տածում են դեպի բոլութիկները։ Կրկնվում և պատմությունը, թեև նոր հիմքով։ Ինչպես վոր առաջ, փեռլալիզմի անկման ժամանակաշրջանում, «յակոբին» բառն և բուժուական յերկրներում սարսափ ու գարշանք առաջացնում։ Յեկ ընդհակառակը, ինչպես վոր առաջ Փարիզն եր հանդիպանում բարձրացող բորժուազիայի հեղափոխական ներկայացուցիչների համար պատսպարան ու դպրոց, այնպէս ել այժմ Մոոկլան և հանդիպանում բարձրացող պրոլետարիատի հեղափոխական ներկայացուցիչների համար պատըպարան ու դպրոց։ Յակոբիններին ատելը Փեղակալիզմին չփրեց կործանումից։ Արդյօք կարելի յէ կասկածել, վոր բոլութիկներին ատելը չի փրկելու կապիտալիզմին նրա անխռուափելի ջախջախումից։

Անցավ կապիտալիզմի «կայունության» դարաշրջանը՝ իր հետ տանելով բորժուական կարգերի անհողողողության առանգելը։

Հասել ն կապիտալիզմի կործանման դարագլուխը։

4. Հոկտեմբերյան հեղափոխությունը միայն անտեսական ու հասարակական-քաղաքական հարաբերությունների բնագավառում կատարված հեղափոխություն չե։ Նա միա-

ժամանակ հեղափոխություն և բանվոր դասակարգի մաքերի մեջ, հեղափոխություն և նրա գաղափարախոսության մեջ։ Հոկտեմբերյան հեղափոխությունը ծնվեց ու ամբապնդվեց մարզսիզմի գրոշի ներքո, պրոլետարիատի դիկտատորայի գաղափարի գրոշի ներքո, ինինիզմի գրոշի ներքո, լենինիզմի, վորն իմպերիալիզմի ու պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանի մարզսիզմն է։ Ես այս պատճառով նշանավորում և մարզսիզմի հաղթությունն ընդգեմ սեֆորմիզմի, լենինիզմի հաղթությունն՝ ընդգեմ սոցիալ-դեմոկրատիզմի, Ա Խոհենացիոնալի հաղթությունն՝ ընդգեմ Ա Խոհենացիոնալի հաղթությունն՝ ընդգեմ Ա Խոհենացիոնալի։

Հոկտեմբերյան հեղափոխությունն անանցանելի ակն քաշեց մարզսիզմի ու սոցիալ-դեմոկրատիզմի միջև, լենինիզմի քաղաքականության ու սոցիալ-դեմոկրատիզմի քաղաքականության միջև։ Անաջներում, մինչև պրոլետարիատի դիկտատորայի հաղթությունը, սոցիալ-դեմոկրատիզմի կարող եր պմամուլվել մարզսիզմի գրոշով՝ բացուած չժխուելով պրոլետարիատի գիտատուրայի գաղափարը, բայց և վոչինչ, բացարձակապես վոչինչ չանելով այն բանի համար, վոր մոռեցնի այլ գաղափարի իրազործումը, վորովհետեւ սոցիալ-դեմոկրատիայի այսպիսի վարդապետը վասմի ապառնալիք չեր ստեղծում կապիտալիզմի համար։ Այն յամանակ, այն շրջանում սոցիալ-դեմոկրատիան ձևականորեն ձուլվում եր կամ զբելի ձուլվում եր մարզսիզմի հետ։ Այժմ, պրոլետարիատի դիկտատորայի հաղթությունից հետո, յերբ բոլորն ակներևորեն տեսան, թե գեղի ի՞նչ և տանում մարզսիզմը, և թե ի՞նչ կարող և նշանակել նրա հաղթությունը, սոցիալ-դեմոկրատիան այլիս չեր կարող պմամուլվել մարզսիզմի գրոշով, չեր կարող կոկետություն անել պրոլետարիատի գիտատուրայի գաղափարի հետ՝ առանց վորոշ վասանգ ստեղծելու կապիտալիզմի համար։ Սոցիալ-դեմոկրատիան, վաղուց խղելով կապը մարզսիզմի վորոշ հետ, հարկադրված յեղափ կապը խղելու մարզսիզմի գրոշի հետ ել, բացուած ու աներկմատ կերպով կանգնեց մարզսիզմի զավակի դեմ։ Հոկտեմբերյան հեղափոխության դեմ, պրոլետարիատի՝ աշխարհումս առաջին դիկտատորայի դեմ։ Այժմ սոցիալ-դեմոկրատիան պետք և սահ-

մանածրվեր, և իրոք սահմանածրվեց մարքսիզմից, վորով-  
չետե ներկա պայմաններում չե կարելի իրեն մարքսիստ  
անվանել՝ բացորոշ և անձնիթրարար չպաշտպանելով աշ-  
խարհի առաջին պրոլետարական դիկտատուրան, հեղափո-  
խական պայքար չմղելով իր բուրժուազիայի դեմ, պայ-  
մաններ չստեղծելով պրոլետարիատի դիկտատուրայի հաղ-  
թության համար իր սեփական յերկրում։ Սոցիալ-դեմո-  
կրատիայի և մարքսիզմի միջև անդունդ է բացվել։ Այսու-  
հետեւ մարքսիզմի միակ կրողն ու պատվարը լենինիզմը,  
կոմունիզմն է։

Բայց բանը սրանով չուհմանափակվեց։ Հոկտեմբե-  
րյան հեղափոխությունը, սահմանածրելով սոցիալ-դեմո-  
կրատիային մարքսիզմից, այլելի առաջ գնաց՝ սոցիալ-դեմո-  
կրատիային չպրաելով աշխարհի առաջին պրոլետարական  
դիկտատուրայի դեմ կապիտալիզմն ուղղակի պաշտպանող-  
ների բանակը։ Յերբ պ. պ. Ազգերներն ու Բառերները,  
Վելսերն ու Լեվիները, Լոնգեներն ու Բլյումները հայնո-  
յում են «ֆորհրդային ռեժիմը», գովարանելով պարամեն-  
տական «գեմոկրատիան», ապա գրանով նրանք ուզում են  
տաել, թե իրենք պայքարում են և պետք է պայքարեն կա-  
պիտալիստական կարգերը ԽՍՀՄ-ում վերականգնելու հա-  
մար, կապիտալիստական սորկությունը «քաղաքակերթ»  
որևություններում պահելու համար։ Այժմյան սոցիալ-դե-  
մոկրատիզմը կապիտալիզմի գաղափարային հենարանն է։  
Լենինը հազար անգամ իրավացի յեր, յեր ասում էր, թե  
սոցիալ-դեմոկրատական այժմյան քաղաքագետները «բուր-  
ժուազիայի իսկական գործակալներն են բանվորական շարժ-  
ման մեջ, կապիտալիստների դասակարգի բանվորական  
գործակատարներն են», թե «պրոլետարիատի քաղաքացիա-  
կան պատերազմում ընդդեմ բուրժուազիայի» նրանք ան-  
խուասիկիորեն կկանգնեն «վերսալյիների կողմն ընդդեմ  
կոմունարների»։ Անենարին և վերջ տալ կապիտալիզմին՝  
առանց վերջ տալու սոցիալ-դեմոկրատիզմին բանվորական  
շարժման մեջ։ Այս պատճառով՝ կապիտալիզմի մահացման  
դարագլուխը սրա հետ միասին հանդիսանում է սոցիալ-  
դեմոկրատիզմի մահացման դարագլուխը բանվորական  
շարժման մեջ։ Հոկտեմբերյան հեղափոխության մեջ նշա-

նակությունն , ի միջի այլոց , այն և , վոր նա նշանավուրում ե լենինիզմի անխռուսափելի հաղթանակն ընդդեմ սոցիալ-դեմոկրատիզմի՝ համաշխարհային բանվորական շարժման մեջ :

Վերջացել է Ⅱ ինտերնացիոնալի ու սոցիալ-դեմոկրատիզմի տիրապետության դարաշրջանը բանվորական շարժման մեջ :

Հասել է լենինիզմի ու Ⅲ ինտերնացիոնալի տիրապետության դարադլուխը :

«Правда» № 255,  
6—7 նոյեմբերի 1927 թ.



198  
A

**Խմբագիր Ը. Մարտիրոսյան**

**Տեխն. խմբ. Ա. Խաչատրյան**

**Սբագրիչ Վ. Զիդեջյան**

**Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արուլյան**

---

**Դրավիճակի լիազոր № Կ—3340, հրատ. № 618,**

**Գումարէր № 160, տիրամ 5.000,**

**Հանձնվել և արտադրության 19/XI 1938 թ.**

**Ստորագրվել և տպագրելու 15/XII 1938 թ.**

**Գինը 15 կ. կազմը 30 կ.**

---

**Գետհրատ—Քաղաքական գրականության**

**հրատարակչության տպարան**

**Յեղեկան, Ալավերդյան № 65**

12830

1900, 10-20 ft.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0021309

ԳԻՒԾ. 45-4.  
— ՕՏԿԱՆԿ.

75

A II  
6981

И. СТАЛИН  
МЕЖДУНАРОДНЫЙ ХАРАКТЕР  
ОКТЯБРЬСКОЙ РЕВОЛЮЦИИ

Армгиз — Издательство полит. литературы  
Ереван, 1939

11 роз. 4